Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին թիվ 2112726589 և 2112753293 որոշումների հիմքում դրված փաստական հանգամանքների դեմ բերված գանգատները առանց բավարարման թողնելու մասին

<<11>> 06 2021թ. 7-13- 9456 ք.Երևան

Ճանապարհային ոստիկանության պետ, ոստիկանության գնդապետ Ե.Կարապետյանս, վերանայելով Նորիկ Սողոյանի **ՄԴ/46684-21** դիմումի քննարկման արդյունքում ստեղծված նյութերը՝

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

Արարատի մարզի Լանջազատ գյուղի Չարենց փողոցի 20-րդ տան բնակիչ Նորիկ Սողոյանը դիմումով իր անհամաձայնությունն է հայտնել Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին թիվ 2112726589 և 2112753293 որոշումներին՝ նշելով, որ առաջին դեպքում տրանսպորտային միջոցը կանգառ է կատարել «Կանգառն արգելվում է» ճանապարհային նշանի ազդման գոտում, իսկ երկրորդ դեպքում տեղակայել է երկրորդ շարքում խափանման պատճառով:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 286-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն Նորիկ Սողոյանը ճանաչվել է որպես խախտումը կատարած անձ, ուստի նրա կողմից ներկայացված գանգատը ենթակա է քննության:

Դիմումի քննարկման արդյունքում պարզվել է, որ դիմումատուի փաստարկները չեն կարող վարչական տույժերը բեկանելու հիմք հանդիսանալ հետևյալ պատճառաբանությամբ.

<<Տեսանկարահանող և լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունների մասին>> օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական վարույթի իրավախախտման հատկանիշների պարզման փուլում իրավախախտումը հիմնավորող ապացույցը իրավախախտումն ամրագրած **տեսանյութն է կամ լուսանկարը**, որը պարունակում է նաև տեխնիկական միջոցով արձանագրված տվյալները: Ըստ նույն հոդվածի 2-րդ մասի՝ որպես իրավախախտումը հիմնավորող ապացույց վարչական կամ դատական կարգով բողոքարկման վարույթում կարող են օգտագործվել Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 251-րդ հոդվածով նախատեսված ապացույցները:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 251-րդ հոդվածի 1-ին մասով վարչական իրավախախտման վերաբերյալ գործի ապացույցներ են համարվում ցանկացած այն փաստական տվյալները, որոնց հիման վրա օրենքով սահմանված կարգով մարմինները (պաշտոնատար անձինք) հաստատում են վարչական իրավախախտման առկայությունը կամ բացակայությունը, տվյալ անձի մեղավորությունը այն կատարելու մեջ և գործի ճիշտ լուծման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքներ:

Նույն հոդվածի 2-րդ մասով այդ տվյալները հաստատվում են հետևյալ միջոցներով՝ վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությամբ, վարչական պատասխանատվության ենթարկվող անձի բացատրություններով, տուժողի, վկաների ցուցմունքներով, փորձագետի եզրակացությամբ, իրեղեն ապացույցներով, իրեր և փաստաթղթեր վերցնելու վերաբերյալ արձանագրությամբ, ինչպես նաև այլ փաստաթղթերով:

ՀՀ կառավարության <<Ճանապարհային երթևեկության կանոնները և տրանսպորտային միջոցների շահագործումն արգելող անսարքությունների ու պայմանների ցանկը սահմանելու մասին>> 28.06.2007թ. թիվ 955-Ն որոշման համաձայն՝ 3.27 «Կանգառն արգելվում է» ճանապարհային նշանը արգելում է տրանսպորտային միջոցների կանգառն ու կայանումը:

Նշանների ազդեցությունը տարածվում է՝ ճանապարհի միայն այն կողմի վրա, որտեղ դրանք տեղադրված են, նշանի տեղադրման տեղից մինչև դրանից հետո գտնվող մոտակա խաչմերուկը, իսկ բնակավայրերում, խաչմերուկի բացակայության դեպքում, մինչև բնակավայրի վերջը: Նշանների ազդեցությունը չի ընդհատվում հետադարձի և բաժանարար գոտու խզման, ինչպես նաև ճանապարհներին մերձակա տարածքներից ելքի և դաշտային, անտառային և այլ երկրորդական ճանապարհների հատման (հարման) տեղերում, եթե դրանցից առաջ համապատասխան նշաններ տեղադրված չեն.

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն տրանսպորտային միջոցների վարորդների կողմից ճանապարհային նշանների կամ ճանապարհային գծանշումների պահանջները չկատարելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հնգապատիկի չափով:

Վիճարկվող թիվ 2112726589 որոշումով ամրագրված իրավախախտման PIN անհատական ծածկագրի տակ զետեղված տեսանյութի համաձայն՝ դիմումատուին պատկանող տրանսպորտային միջոցը 30.04.2021թ. ժամը 11:16-ին կանգառ է կատարել Երևան քաղաքի Աբովյան-Թումանյան փողոցների խաչմերուկի հատվածում՝ 3.27՝ <<Կանգառն արգելվում է>> ճանապարհային նշանի ազդման գոտում:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124-րդ հոդվածի 36-րդ մասի համաձայն՝ Ճանապարհային նշանների պահանջները չկատարելու համար սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված վարչական իրավախախտումն ունի նվազ նշանակություն այն դեպքում, երբ իրավախախտումն անխուսափելիորեն կատարվել է երթևեկության այլ մասնակցի գործողության կամ անգործության պատճառով:

Ինչ վերաբերվում է Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին թիվ 2112753293 որոշմանը, ապա ՀՀ կառավարության <<Ճանապարհային երթևեկության կանոնները և տրանսպորտային միջոցների շահագործումն արգելող անսարքությունների ու պայմանների ցանկը սահմանելու մասին>> 28.06.2007թ. թիվ 955-Ն որոշման 80-րդ կետի համաձայն՝ տրանսպորտային միջոցը տեղակայել թույլատրվում է երթևեկելի մասի եզրին զուգահեռ մեկ շարքով՝ բացառությամբ այն տեղերի /երթևեկելի մասի տեղային լայնացում, որտեղ գծանշմամբ թույլատրված են տրանսպորտային միջոցների դասավորման այլ ձևեր:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124-րդ հոդվածի 21-րդ մասի համաձայն՝ տրանսպորտային միջոցների վարորդների կողմից կանգառի և (կամ) կայանման կանոնները խախտելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հնգապատիկի չափով, տուգանային միավորի կիրառում՝ 0.5 միավոր:

Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին թիվ 2112753293 որոշմամբ արձանագրած իրավախախտումն ամրագրված տեսանյութի լրացուցիչ ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ 05.05.2021թ. ժամը 13:07-ին Երևան քաղաքի, Թումանյան-Հանրապետության փողոցների խաչմերուկի հատվածում իրավախախտման փաստը սկսվում է արձանագրվել 13:07:29-րդ վայրկյանից և դադարում 13:08:43-րդ վայրկյանին՝ տևելով 74 վայրկյան:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124-րդ հոդվածի 39-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածի 21-րդ և 25-րդ մասերով (միայն կանգառ կատարելու մասով) նախատեսված վարչական իրավախախտումն ունի նվազ նշանակություն այն դեպքում, երբ կանգառը կատարվել է միայն ուղևորների նստելու կամ իջնելու նպատակով, չի գերազանցել մեկ րոպե ժամանակահատվածը, և դրա հետևանքով երթևեկության մյուս մասնակիցների համար խոչընդոտ կամ վթարային իրադրություն առաջացնելու ակնհայտ վտանգ չի ստեղծվել, հետևաբար առկա չէ իրավական որևէ հիմք դիմումատուի արարքը նվազ նշանակություն ունեցող գնահատելու համար:

Ինչ վերաբերվում է դիմումատուի այն պնդմանը, որ տրանսպորտային միջոցը կանգառ է կատարել «Կանգառն արգելվում է» ճանապարհային նշանի ազդման գոտում և տեղակայել է երկրորդ շարքում ավտոմոբիլի անսարքության պատճառով, ապա ՀՀ կառավարության <<Ճանապարհային երթևեկության կանոնները և տրանսպորտային միջոցների շահագործումն արգելող անսարքությունների ու պայմանների ցանկը սահմանելու մասին>> 28.06.2007թ. թիվ 955-Ն որոշման 83-րդ կետի համաձայն՝ կանգառն արգելված վայրում հարկադրված կանգառ կատարելու դեպքում վարորդը առաջին հերթին պետք է կատարի նույն որոշման 22-րդ (վթարային լուսային ազդանշանը պետք է միացված լինի կանգառն արգելված տեղերում հարկադրված կանգառի դեպքում) և **23-րդ (կանգառն արգելված տեղերում հարկադրված կանգառի դեպքում վթարային լուսային ազդանշանը միացնելուց հետո (ինչպես նաև, երբ այն անսարք է կամ բացակայում է) անհապաղ պետք է տեղադրվի <<վթարային կանգառ>> ճանաչման նշանը (թարթող կարմիր լապտերիկ)** կետերի պահանջները, որից հետո պետք է ձեռնարկի բոլոր անհրաժեշտ միջոցները՝ տրանսպորտային միջոցը այդ վայրից դուրս բերելու համար:

Հարկ է նշել, որ ՀՀ կառավարության <<Ճանապարհային երթևեկության կանոնները և տրանսպորտային միջոցների շահագործումն արգելող անսարքությունների ու պայմանների ցանկը սահմանելու մասին>> թիվ 955-Ն որոշման 25-րդ կետի համաձայն՝ Արգելվում է առավելություն ստանալու, ինչպես նաև կանգառն արգելված վայրերում կանգառ կատարելու (բացառությամբ հարկադրված կանգառի) նպատակով վթարային ազդանշանի օգտագործումը:

Այսպիսով հիմնավորվել է, որ վարչական տույժ նշանակելու մասին վերը նշված որոշումներն իրավաչափ են և օրինական:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 286-րդ հոդվածի 1-ին մասով և 293-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին թիվ 2112726589 և 2112753293 որոշունների հիմքում դրված փաստական հանգամանքների դեմ բերած գանգատները թողնել առանց բավարարման:
2. **Հանձնարարել ՏՄՀԻՎԳՔ բաժնին՝ Նորիկ Սողոյանի անվամբ կայացնել նոր վարչական ակտ:**
3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում:
4. Սույն որոշման օրինակն ուղարկել Նորիկ Սողոյանին **և ՃՈ ՏՄՀԻՎԳՔ բաժին:**

Ե.Կարապետյան

Կատարող՝Ա.Հարությունյան
հեռ. (011) 54-47-83